ընդ Երեսփոխանաց 'ի դատին · հմուտ և տեղեակ բովանդակ գործոց եւ խորհրդոց Դատաւորաց, լեալ ականատես, եւ զԱդամ Գալֆա յազգէն Հայոց 7 գործաւորաց · զի ըստ արհեստին իւրոյ զգուշացի 'ի քննութեան եւ 'ի չափելն եւ հոգալ զայլ կարեւոր պէտս։ Յետ այնորիկ պատրաստեալ սոցա զամենայն ինչ եւ առեալ զհրովարտակն՝ մտին 'ի նաւ (1813 · 'ի 22 Մարտի) · և յետ երկուց աւուրց՝ ելին յայլ նաւ գործակալք Տէրութեանն սպասաւորաք և պարագայիւք իւրեանց եւ նաւեալ յաջողակ հողմով հասին 'ի Կիպրոս ('ի 11 Ապրիլի) · և 'ի վարձու կալեալ վարդապետաց զայլ նաւ՝ մտին անդ, առին ընդ ինքեանս զսպասաւորս և զկարասիս Նուրի Էֆէնտեայ, և նաւեալ անտի հասին 'ի Յոպպէ, և անտի ելին յԵրուսաղէմ ('ի 15 Ապրիլի)։ Իսկ գործակալքն Արքունի հասեալ 'ի Պէրութ, գնային 'ի Դամասկոս տեսանել զկուսակալն, արձանագրել զհրովարտակն Հայոց, զորոյ պատճէնն ունէին ընդ ինքեանս, առնուլ գիր հրամանի 'ի կուսակալէն, և հոգալ զայլ կարեւոր իրս։

Փոխանորդ Պօղոս վարդապետ և այլ թեւակիցք նորին 'ի Կոստանդինուպօլիս, յորժամ խնայան թէ չէ գրեալ 'ի հրովարտակն ոսմիկանին չինել զպակաս տեղիսն Հայոց, մատուցին զերկուս աղերսագիրս, մին 'ի Դուռն և միւսն առ Դենպետն · զի 'ի լրումն ածցեն զթերի մնացեալ տեղիս Հայոց, սակայն ոչ ետուն հրաման · զի յանձն արարեալ էին զայն 'ի քննութիւն Գործակալաց, եւ յետ այնր հոգալ զպակասորդն · պռ այս լռեալ Հայոց սպասէին գալստեան Իլամին յԵրուսաղէմ։

Յետ հասանելոյ վարդապետաց 'ի Ս · Աթոռն՝ մատուցին զհրովարտակն Արքայի առ Թէոդորոս Պատրիարք, առ որ ժողովեալ էին Եպիսկոպոսունք եւ Վարդապետք, և ուրախացեալ առ ժամն՝ օրհնեցին զԱրքայն և զվաստակաւորս գործոյն։ Բայց առաջի կայր նոցա դժուարութիւն մեծ սակս գործադրութեան հրովարտակին · և կոչեալ զքաղաքապետն ցուցին նմա զայն առանձին և խօսեցան բազում ինչ՝ վասն տանել գործադրութեան հրովարտակին, եւ զմի պատճէնն առաքեցին առ Դատաւոր քաղաքին, որ 'ի նոյն աւուրս եկեալ էր յԵրուսաղէմ, և